«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 դեկտեմբերի 2013 թվականի

Լսելով և քննարկելով **«Համալսարանի ինստիտուցիոնալ ինքնավերլուծության ուղղությամբ կատարվող աշխատանքների ընթացքը և ստորաբաժանումների խնդիրները»** հարցը (զեկուցող՝ որակի ապահովման բաժնի պետ Ն.Ա.Գևորգյան)՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Հանձնարարել համալսարանի վարչական բոլոր ստորաբաժանումներին, ամբիոններին, դեկանատներին՝**
   1) որակի ապահովման բաժնին և աշխատանքային խմբերին ցուցաբերել գործուն աջակցություն անհրաժեշտ տվյալների, փաստաթղթերի և խորհրդատվության տրամադրման գործում:

2. **Հանձնարարել որակի ապահովման բաժնին՝**
   1) հաշվի առնելով որակի ապահովման գործընթացների (պլանավորում, իրականացում, գնահատում և բարեփոխում) մշտական և համահամալսարանական բնույթը, անձնակազմի կառավարման և իրավաբանական բաժինների հետ համագործակցելով՝ նախապատրաստել որակի ապահովման խորհրդի, ինքնավերլուծությունն իրականացնող փորձագիտական խմբերի և որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուների կազմի, գործառույթների վերանայումը, աշխատանքների իրականացման ժամանակացույցը և հաշվետվողականությունը,
   2) ներկայացնել առաջարկություններ որակի ապահովման գործընթացներն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով,
   3) հստակեցնել ֆակուլտետային պատասխանատուների պարտականությունները որակի ապահովման, մասնավորապես՝ ինքնավերլուծության աշխատանքներում:

3. **Հանձնարարել Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի տնօրեններին՝**
   1) նշանակել որակի ապահովման պատասխանատուներ,
   2) համակարգել աշխատանքները որակի ապահովման բաժնի հետ,
   3) ներկայացնել աշխատանքների իրականացման ժամանակացույցը և հաշվետվողականությունը:

4. **Հանձնարարել ռեկտորատին՝**
   1) նախապատրաստական աշխատանքներ կատարել ծրագրային հավատարմագրման գործընթացն սկսելու ուղղությամբ:

5. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**
05.12.2013 թ.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 դեկտեմբերի 2013 թվականի

Ուսանողական խորհրդի հաշվետվությունն ուսանողների ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական, հայրենասիրական դաստիարակության աշխատանքների մասին

Լսելով և քննարկելով **«Ուսանողական խորհրդի հաշվետվությունն ուսանողների ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական, հայրենասիրական դաստիարակության աշխատանքների մասին»** հարցը (զեկուցող՝ ուսանողական խորհրդի նախագահ, տնտեսագիտության թեկնածու Ս.Ս.Խաչատրյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. անցած մեկ տարվա ընթացքում ուսանողական խորհուրդը շարունակել է իր շուրջ համախմբել ուսանողներին, ովքեր հասարակական գործունեություն են ծավալել ինչպես բուհում, այնպես էլ բուհից դուրս՝ բարձր պահելով համալսարանի պատիվը: Կազմակերպվել են օլիմպիադաներ, տնտեսագիտական ուսանողական գիտաժողովներ, մարզական և մշակութային միջոցառումներ, ինտելեկտուալ խաղեր, «Ոսկե աշուն», «Ուսանողական գարուն» ավանդական դարձած մրցույթ-փառատոնները, բանավեճեր, այցելություններ Հայաստանի պատմամշակութային վայրեր և թանգարաններ: Պարբերաբար շարունակվել են ուսանողների կողմից մեծ արձագանք ստացած «Բաց դասերի» շարքը: Ուսանողներն ակտիվորեն մասնակցել են նաև հայրենասիրական ծրագրերին. ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ պարբերաբար այցելություններ են կատարել տարբեր զորամասեր, սահմանային գոտիներ: Ռազմահայրենասիրական ծրագրերից հատկանշական է ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ հրատարակված «Մարտական հաշվարկ» գիրքը, որտեղ ներկայացված են մեր բուհի այն ուսանող-ազատամարտիկների կյանքն ու մարտական ուղին, ովքեր հերոսաբար ընկել են Արցախյան հերոսամարտում:

Ուսանողական խորհուրդը պարբերաբար իրագործել է սոցիալական ծրագրեր՝ այցելություններ մանկատներ, ծերանոցներ և այլն: Չեն անտեսվել նաև կարիքավոր ուսանողների խնդիրները. սույն թվականի փետրվարին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հետ համատեղ իրականացվել է մոտ 100 ուսանողի վարձի մասնակի փոխհատուցում: Ակտիվ մասնակցություն է ունեցել նաև կրթական համակարգին վերաբերող աշխատանքներին: Պարբերաբար իրականացվել են սոցիոլոգիական հարցումներ՝ ուսանողությանը հետաքրքրող հարցերի շուրջ:

Հաշվետու տարում Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանում կազմակերպվել է «Ուսանողական ամառ-2013» մրցույթ-փառատոնը: Շարունակվել է լույս ընծայվել «Էկոնոմ plus» ամսաթերթը, որտեղ պարբերաբար ներկայացվել են ուսանողների իրավունքներն ու խնդիրները: Պարբերաբար թարմացվել է ուսանողական խորհրդի պաշտոնական կայքէջը: Հաշվետու տարում ուսանողական խորհրդի ֆեյսբուքյան էջի վարկանիշը հնգապատկվել է:

Համալսարանի ուսանողները փայլուն մասնակցություն են ունեցել «Բազե-2013» երիտասարդական հավաքին և վերադարձել են հաղթանակով, որին ներկա է եղել նաև ՀՀ նախագահը:

Սույն թվականի հունվարի 19-ին Հայաստանի Երգի պետական թատրոնում տեղի ունեցած Հայկյան մրցանակաբաշխության ժամանակ ՀՊՏՀ ուսանողական խորհուրդը երկրորդ տարին անընդմեջ արժանացել է «Լավագույն ուսանողական ինքնակառավարման մարմին» անվանակարգին: Պարգևը հանձնել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

Ապրիլի 16-ին Ստանիսլավսկու անվան դրամատիկական թատրոնում կայացած ՈՒՀԱ (ուրախների և հնարամիտների ակումբ) «Գարնանային գավաթ» մրցույթ-փառատոնում, որին մասնակցում էին ՀՀ բուհերի ՈՒՀԱ թիմերը, ժյուրիի որոշմամբ փառատոնի հաղթող է ճանաչվել ՀՊՏՀ «Hap-Xoз» ՈՒՀԱ թիմը:

Նոյեմբերի 11-ին, ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի հրամանով, կրթական ոլորտի զարգացման գործում ունեցած մեծ ներդրման համար ՀՊՏՀ ուսանողական խորհուրդը պարգևատրվել է ՀՀ ԿԳՆ ոսկե հուշամեդալով:

Սույն թվականի նոյեմբերի 12-14-ը ՀՀ կառավարության նիստերի դահլիճում առաջին անգամ տեղի ունեցած «Հայացք ապագային» երիտասարդական-ուսանողական եռօրյա ցուցահանդես-համաժողովում, որին մասնակցում էին 60-ից ավելի երիտասարդական և ուսանողական կազմակերպություններ, համալսարանի ուսանողական խորհրդի տաղավարը ճանաչվել է լավագույնը և պարգևատրվել:

2013 թվականի ընթացքում առաջնային ուշադրություն է դարձվել ինտե-լեկտուալ մրցույթ-փառատոններին. մասնավորապես՝ համալսարանի «Ինդեքս-Պրո» գիտակների թիմը հաղթել է միջբուհական երեք մրցույթներում, ինչպես նաև մասնակցել երկու միջազգային մրցույթի:

Ուսանողական խորհուրդը շարունակել է կազմակերպել ավանդույթ դարձած ևս մի քանի միջոցառումներ՝ «Ալո, փնտրում ենք տաղանդներ» համերգային ծրագիրը, «ՀՊՏՀ գավաթ-2013» միջբուհական ինտելեկտուալ փառատոնը: Ֆիզդաստիա-րակության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի հետ համատեղ կազմակերպել է մարզական մի շարք խաղեր: Կազմակերպվել է նաև «ՀՀ տնտեսության զարգացման խոչընդոտներն ու մարտահրավերները» խորագրով ուսանողական գիտաժողովը, որի ավարտին տպագրվել է նյութերի ժողովածու: Գիտաժողովին ներկա է եղել ՀՀ Ազգային ժողովի նախագահ, ՀՊՏՀ խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանը:

Հաշվետու տարում ուսանողական խորհրդի հրավերով Հայաստան են եկել Եվրոպայի ուսանողական միության տարբեր պատվիրակություններ:

Զգալի ձեռքբերումներ են եղել միջազգային համագործակցության համատեքստում. տարվա ընթացքում 20 ուսանող այցելել է եվրոպական հեղինակավոր համալսարաններ, տեղում ծանոթացել կրթական ծրագրերին և ուսանողական ինքնակառավարմանը:

Ուսանողական խորհուրդն ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի աշխատանքներին: 2013 թվականի ընթացքում ուսանողական խորհրդի ներկայացուցիչները Ռումինիայում և Խորվաթիայում մասնակցել են Եվրոպայի ուսանողական միության համաժողովներին:

Ելնելով վերոնշյալից՝ համալսարանի գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Ուսանողական խորհրդի կատարած աշխատանքը գնահատել բավարար:**

2. **Առաջարկել ուսանողական խորհրդին՝**
   1) առավել կարևորել դաստիարակչական, ազգային, հայրենասիրական բնույթի միջոցառումների կազմակերպումը,
   2) սերտորեն համագործակցել ռեկտորատի, արհկոմիտեի, դեկանատների և ամբիոնների հետ ուսումնագիտական և ուսումնադաստիարակչական աշխատանքներում,
   3) ուսանողության շրջանում պարբերաբար անցկացնել սոցիոլոգիական հարցումներ և արդյունքները ներկայացնել ռեկտորատի քննարկմանը,
   4) ավելի մեծ ուշադրություն դարձնել կարիքավոր ուսանողների խնդիրներին,
   5) ձեռնարկել միջոցառումներ ուսանողների կարգապահության ամրապնդման ուղղությամբ,
   6) առանձնահատուկ ուշադրություն դարձնել առաջին կուրսեցիների հետ կատարվող աշխատանքներին,
   7) ակտիվորեն համագործակցել Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի ուսանողական խորհուրդների հետ,
   8) համագործակցել համալսարանի հենակետային ավագ դպրոցների հետ,
   9) կնքել ստեղծագործական պայմանագրեր, հաստատել կապեր արտերկրի համանման երիտասարդական կազմակերպությունների հետ:

3. **Սույն որոշման կատարման նկատմամբ պատասխանատվությունը վերապահել ուսանողական խորհրդի նախագահ Ս.Ս.Խաչատրյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**
05.12.2013 թ.